Արձանագրություն N 2

2024-2025 թվականների Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղի (ինսուլին) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» «Ապրիլի» 2024թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Հ. Մնացականյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Մնացականյան)

Ընդունել ի գիտություն, որ 27.02.24թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի մարտի 14-ին, ժամը 12:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2024 թվականի մարտի 15-ին ժամը 12:00-ին: 2024 թվականի մարտի 18-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ	tender@mlnpharm.am	02567316

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Հ. Մնացականյան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում մասնակցի կողմից առաջարկված ապրանքը ներկայացված է 5 ապրանքային նշաններով, որոնք 04.04.2024թ. ներկայացվել են Առողջապահության նախարարության մանկական ներզատաբանության գծով խորհրդատուին կարծիքի, վերջինիս կողմից 05.04.2024թ. ստացվել է պատասխան (կցվում են), որից հետո գնահատող հանձնաժողովը որոշել է վերջինս ներկայացնել «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ին և 08.04.2024թ. գնահատող հանձնաժողովի որոշել է կասեցնել մեկ աշխատանքային օրով հայտի գնահատումը և գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդ համակարգով ծանուցել է մասնակցին վերոգրյալի մասին և առաջարկել

վերանայել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ մասնավորապես վերանայել առաջարկը «Սիմգլի» ապրանքային նշանի մասով: Սահմանված ժամկետում «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր դիրքորոշումը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Հ. Մնացականյան)

Մասնակցի կողմից ներկայացված վերջնական գները 15.03.2024թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Մնացականյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Մնացականյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Մնացականյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ-ն 755,645,220 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

Hasmik Sargsyan

From: PharmDept <medicines@moh.am>
Sent: пятница 5 апреля 2024 11:35
To: hsargsyan@moh.am
Subject: FW: FW: Emailing: 1.pdf

Հարգանքով՝

Մարինե Հարությունյան
Դեղորայքային քաղաքականության և
բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն

ՀՀ, ք.Երևան, 0010, Կառավարական տուն N 3
Հեռ.՝ (+374 60) 808003 /1421

From: Elena Aghajanova <eaghajanova@gmail.com>
Sent: 4 апреля 2024 г. четверг 23:49
To: PharmDept <medicines@moh.am>
Subject: Re: FW: Emailing: 1.pdf

Հարգելի տիկին Հարությունյան,
Ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում եմ, որ ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, երկար տարիների ընթացքում մեծ փորձ է կուտակվել ինսուլինի երկարատև ազդեցության անալոգների օգտագործման հարցում, ինչպիսիք են Lantus (glargine), Abazaglar (glargine), Tresiba (deglutek): Ինչ վերաբերում է Levemir (detemir) ինսուլինի անալոգին, ապա, ելնելով դրա ազդեցության տևողությունից, այն պետք է պարտադիր ներարկվի օրական երկու անգամ, ինչը կստեղծի որոշակի անհարմարություններ օգտագործման մեջ, այս առումով նախընտրելի է գնել երկարատև գործող ինսուլինային անալոգներ, որոնք գործում են. 24 ժամ (Glargine) կամ ավելի քան 42 ժամ (deglutec) Ինչ վերաբերում է բիոսիմիլյար Semglee-ին (Glargine), ապա այն ամբողջ աշխարհում օգտագործման փոքր փորձ ունեցող նոր դեղամիջոց է: Կարծում եմ, որ Հայաստանում օգտագործելուց առաջ անհրաժեշտ է սպասել այս նոր ինսուլինի օգտագործման համաշխարհային փորձի կուտակմանը:
Հարգանքով՝
Ելենա Աղաջանովա

On Thu, Apr 4, 2024 at 5:51 PM PharmDept <medicines@moh.am> wrote:

Խնդրում եմ Ձեր կարծիքը

Հարգանքով՝

Մարինե Հարությունյան
Դեղորայքային քաղաքականության և
բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն

ՀՀ, ք.Երևան, 0010, Կառավարական տուն N 3
Հեռ.՝ (+374 60) 808003 /1421

-----Original Message-----
From: Hasmik Sargsyan <hsargsyan@moh.am>
Sent: 4 апреля 2024 г. четверг 17:40
To: medicines@moh.am
Subject: Emailing: 1.pdf

Your message is ready to be sent with the following file or link attachments:

1.pdf

Note: To protect against computer viruses, e-mail programs may prevent sending or receiving certain types of file attachments. Check your e-mail security settings to determine how attachments are handled.

"M.L.N.Pharm" LLC
M.Mashtots ave. 2/39, Yerevan, RA
Phone (+37410) 52 90 72
www.mlnpharm.am

N 775

09.04.2024

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար հայտարարված ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին

«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն Հ.Վասիլյանից
Հասցե (գտնվելու վայրի)՝ ՀՀ, ք. Երևան, Սարյան 24
Հասցե (ծանուցման)՝ ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի պող. 2/2, տարածք 39
Հեռ: (+374) 10-52-90-72
Էլ.փոստ՝ info@mlnpharm.am

Հարգելի՝ գնահատող հանձնաժողով,

ՀՀ առողջապահության նախարարության կողմից վերջինս կարիքների համար հայտարարվել է ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ–ն:

08.04.2024թ. գնահատող հանձնաժողովի կողմից ստացել ենք ծանուցում, որում մասնավորապես նշվել է հետևյալը.

Հարգելի Մ.Լ.Ն Ֆարմ ՍՊԸ,

Դուք դիմել եք ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2024/39 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին: Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր Դիմում-Հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ թերությունները. Հարգելի մասնակից:\nՈՒսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը, մասնավորապես դեղի առաջարկված տարբեր ապրանքային նշանները, ինչպես նաև ղեկավարվելով Առողջապահության նախարարության մանկական ներզատաբանության գծով խորհրդատուի կարծիքով՝ (Հարգելի տիկին Հարութ?! Ունյան,\nԻ պատասխան Ձեր հարցմանը տեղեկացնում եմ, որ ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, երկար տարիների ընթացքում մեծ փորձ է կուտակվել ինսուլինի երկարատև ազդեցության անալոգների օգտագործման հարցում, ինչպիսիք են Lantus (glargine), Abazaglar (glargine), Tresiba (deglutek): Ինչ

"M.L.N.Pharm" LLC
M.Mashtots ave. 2/39, Yerevan, RA
Phone (+37410) 52 90 72
www.mlnpharm.am

վերաբերում է Levemir (detemir) ինսուլինի անալոգին, ապա, ելնելով դրա ազդեցության տևողությունից, այն պետք է պարտադիր ներարկվի օրական երկու անգամ, ինչը կստեղծի որոշակի անհարմարություններ օգտագործման մեջ, այս առումով նախընտրելի է գնել երկարատև գործող ինսուլինային անալոգներ, որոնք գործում են.! 24 ժամ (Glargine) կամ ավելի քան 42 ժամ (deglutec) Ինչ վերաբերում է բիոսիմիլյար Semglee-ին (Glargine), ապա այն ամբողջ աշխարհում օգտագործման փոքր փորձ ունեցող նոր դեղամիջոց է: Կարծում եմ, որ Հայաստանում օգտագործելուց առաջ անհրաժեշտ է սպասել այս նոր ինսուլինի օգտագործման համաշխարհային փորձի կուտակմանը:\nՀարգանքով \nԵլենա Աղաջանովա)\n առաջարկվում է վերանայել Ձեր առաջարկը «Միմզի» ապրանքային նշանի մասով:: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված Դիմում-Հայտարարությունն ուղարկել համակարգի միջոցով:

Վերոնշյալի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է

"M.L.N.Pharm" LLC
M.Mashtots ave. 2/39, Yerevan, RA
Phone (+37410) 52 90 72
www.mlnpharm.am

մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ ներկայացված հայտում ձեր կողմից չի արձանագրվել ոչ մի անհամապատասխանություն Հրավերի պահանջների նկատմամբ՝ համենայն դեպս այդպիսի փաստ չի նշվել կամ վկայակոչվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ փաստում ենք, որ ձեր կողմից պահանջված շտկումը իրավաչափ չէ և հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34–րդ հոդվածի 1–ին և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներին:

Հայտնում ենք, որ չենք կարող վերանայել «Սիմգլի» ապրանքային նշանի մասով մեր կողմից ներկայացված առաջարկը, քանի որ այն ամբողջությամբ համապատասխանում է աճուրդի Հրավերի պահանջներին:

Կից ներկայացվում է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը:

Հարգանքով՝
«Մ.Լ.Ն. ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն _____ Հարություն Վասիլյան

09.04.2024թ.

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
«НАУЧНЫЙ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ЛЕКАРСТВ И МЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ ИМЕНИ АКАДЕМИКА ЭМИЛЯ ГАБРИЕЛЯНА» АОЗТ
«SCIENTIFIC CENTRE OF DRUG AND MEDICAL TECHNOLOGY EXPERTISE AFTER ACADEMICIAN EMIL GABRIELYAN» CJSC

Կոմիտաս պող. 49/5, Երևան 0051, Հայաստան
пр. Комитаса 49/5, Ереван 0051, Армения
49/5 Komitas aven., Yerevan 0051, Armenia

Tel.: (+374 60) 83-00-73, (+374 10) 23-16-82, 23-08-96
E-mail: admin@pharm.am
Web: www.pharm.am

01/1359-24
20.03.2024

Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին

ՄԼՆ Ֆարմ ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Սիմգլի 100ԱՄ/մլ լուծույթ ներարկման նախալցված գրչում 3մլ)** (ինսուլին գլարգին) (Semglee 100 units/ml solution for injection in pre-filled pen 3ml) (insulin glargine) դեղը (գրանցման հավաստագրի իրավատեր՝ Biosimilar Collaborations Ireland Limited Unit 35/36 Grange Parade, Baldoyle Industrial Estate, Dublin 13 DUBLIN Ireland D13 R20R) **ունի ԵՄ կենտրոնացված ընթացակարգով գրանցում,** տեղեկությունը հասանելի է Դեղերի Եվրոպական գործակալության կայքում 19.03.2024 թվականի դրությամբ, հղում՝ https://www.ema.europa.eu/en/medicines/human/EPAR/semglee , դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Biosimilar Collaborations Ireland Limited Unit 35/36 Grange Parade, Baldoyle Industrial Estate, Dublin 13 DUBLIN Ireland D13 R20R, արտադրող՝ Biosimilar Collaborations Ireland Limited Block B, The Crescent Building, Santry Demesne Dublin D09 C6X8 Ireland, գրանցման համարը՝ EU/1/18/1270):

Ներկայացված դեղի ընդհանուր բնութագիրը կցվում է:
Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի:

Տնօրեն՝ Արայիկ Բաղրյան

2024-2025 թվականների կարիքների համար ձեռք բերվելիք դեղի ինսուլին
վերաբերյալ վերջնական գներով 15.03.24թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ									
					Նախնական առաջարկ					Վերջնական առաջարկ				
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին առանց ԱԱՀ-ով	Միավորի գին ԱԱՀ-ով
1	ինսուլին	138,000	5,531.00	763,278,000	636,065,000	127,213,000	763,278,000	4,609.17	5,531.00	629,704,350	125,940,870	755,645,220	4,563.08	5,475.69